# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2024 թվականի N 471-Ա

Գյուղ Ախուրյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳՅՈՒՄՐԻ-ԱՄԱՍԻԱ ՄԱՅՐՈՒՂԻ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵԻ 08-052-0022-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ստանիսլավ Հրաչի Քոչարյանը (ծնված 23/01/1973 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Կապս գյուղի Գյումրի-Ամասիա մայրուղի թիվ 12 հասցեի, 0,14 հեկտար մակերեսով, 08-052-0022-0009 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Ստանիսլավ Հրաչի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված 157.26 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով մեքենատրակտորային պարկը, պահակատունը և պարիսպները կառուցվել են 2021 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 20221KSSGZ ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ

կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ 17-րդ կետերի և 18-րդ կետի գ) ենթակետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Կապս գյուղի (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) համար 0,0743 է և հիմք ընդունելով Ստանիսլավ Հրաչի Քոչարյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կապս բնակավայրի Գյումրի-Ամասիա մայրուղի թիվ 12 հասցեի հողամասի վրա ինքնակամ կառուցված 157.26 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով մեքենատրակտորային պարկը, պահակատունը և պարիսպները ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:

2. Սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված արտադրական շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 15000 դրամ և կիրառել 0,0743 գործակիցը:

3. Շինությունների օրինականացման համար հաշվարկված ընդհանուր վճարը կազմում է 175266 (մեկ հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր վաթսունվեց) դրամ:

4. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի սեփականատիրոջը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«26» ապրիլի 2024 թվական
գյուղ Ախուրյան